Սահմանների հսկողության և կառավարման առաջատար տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը Հայաստանում

Երևան - 2008

Հայաստանի
Հանրապետության
Կառավարություն

Միգրացիայի
միջազգային
կազմակերպություն

ԱՄՆ պետական
դեպարտամենտի
թմրամիջոցների դեմ
պայքարի և իրավապահ
համագործակցության բյուրո

«Ավիահնֆոտել
ՓԲԸ

Սահմանների հսկողության և կառավարման առաջատար տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումը Հայաստանում

Երևան - 2008

Կազմեցին՝ Քրիստինա Գալստյանը (ՄՄԿ) և Մաղլեն Նարինյանը (Ավիահնֆորել)
Անգլերենից թարգմանեց՝ Ն. Հարությունյանը
Տպագրության պատրաստեց՝ ՄՄԿ-ի Հայաստանում ծրագրերի մշակման և իրականացման բաժինը:

© Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

Հրատարակիչ՝ Միգրացիայի Միջազգային կազմակերպություն

Սույն հրատարակությունում արտահայտված տեսակետների համար պատասխանատվությունը կրում են հեղինակները, և դրանք անպայմանորեն չեն արտահայտում ԱՄՆ Կառավարության դիրքորոշումը կամ քաղաքականությունը:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) առաջատար կազմակերպություն է, որն աշխատում է միգրանտների և երկրների կառավարությունների հետ՝ մարդասիրական օժանդակությամբ արշաքանքելով միգրացիայի մարտահրավերներին: Ստեղծվելով 1951 թվականին Եվրոպայում տեղահանված մարդկանց վերաբնակեցման առաքելությամբ՝ այսօր ՄՄԿ-ն ունի ավելի քան 400 գրասենյակներ ողջ աշխարհում և իրականացնում է 1770-ից ավելի ծրագրեր: ՄՄԿ-ի ծրագրային ու օպերացիոն աշխատակիցների թիվը 5600 է, իսկ ծրագրերի համար նախատեսված բյուջեն գերազանցում է 783,8 միլիոն դոլարը: Որպես միջ-կառավարական կառույց՝ ՄՄԿ-ը միավորում է 125 անդամ և 16 դիտորդ երկրներ: Այն հանդես է գալիս Միավորված ազգերի կազմակերպությունում դիտորդի կարգավիճակով և կնքել է համագործակցության պաշտոնական համաձայնագրեր ՄԱԿ-ի բազմաթիվ գործակալությունների հետ: ՄՄԿ-ը աշխատում է միգրացիայի կառավարման չորս հիմնական ուղղություններով: Դրանք են միգրացիան և զարգացումը, միգրացիայի կարգավորումը, հարկադիր միգրացիայի խնդիրների կարգավորումը և միգրացիայի դյուրինացումը:

Միգրացիան համարվում է քսանմեկերորդ դարի սկզբի հանգուցային նշանակություն ունեցող գլոբալ հարցերից մեկը, քանի որ այսօր, ավելին քան մարդկության անցած փուլերից որևէ մեկում, գնալով մեծանում է տեղաշարժվող մարդկանց թիվը: Ներկայումս մոտավորապես 192 միլիոն մարդ (կամ աշխարհի բնակչության շուրջ երեք տոկոսը) ապրում է իր ծննդավայրից դուրս: Այս պայմաններում գնալով բարդանում է *միգրացիայի կառավարումը,* որն անմիջականորեն առնչվում է տնտեսական ու սոցիալական զարգացմանը, մարդու իրավունքներին, անվտանգությանը, կայունությանը և տարածաշրջանային համագործակցությանը: Այսօր համագործակցության միջոցով միգրացիոն հարցերը համապարփակորեն լուծելու ունակությունը համարվում է պատասխանատու ազգային կառավարման, միջազգային արդյունավետ հարաբերությունների և միջազգային կամ տարածաշրջանային կառույցներին լիիրավ անդամակցության հիմնարար պահանջներից մեկը:

Անձնագրերի ու վիզաների համակարգերը, ներգաղթի համակարգերը և սահմանների կառավարման համակարգերը այն գործընթացներն են, որոնց միջոցով պետությունները կառավարում են միգրացիան: Նշված գործընթացներն ապահովում են սահմանների մշտական վերաբաժանման, հաստատման և վարչարարության կառավարման շրջանակը (հաստատված սահմանային տարածքներում կամ գոտիներում աշխատանքների ու շարժի կարգավորման կանոնները, եղանակներն ու ընթացակարգերը): Սահմանների արդյունավետ կառավարումը պետք է ուղղված լինի

տեղական, տարածաշրջանային և անդրազգային հանցագործությունների կանխմանն ու բացահայտմանը:

Անկախության հռչակումից ի վեր միգրացիայի կառավարումը եղել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) գերակա առաջնահերթություններից մեկը: 1990-ականներից սկսած ՄՄԿ-ը աջակցում է Հայաստանի Կառավարությանը միգրացիայի կառավարման կարողությունների բարելավման ուղղությամբ:

ԱՄՆ Կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով ՄՄԿ-ը աջակցում է Հայաստանի Կառավարությանը՝ Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգը (BMIS, ՍԿՏՀ) ընդլայնելու և սահմանի հատման հիմնական հսկիչ անցագրային կետերը ՍԿՏՀ-ում ընդգրկելու խնդրում՝ նպատակ ունենալով ստեղծել միասնական համակարգ և ապահովել Հայաստանում միգրացիոն գործընթացների կառավարման գործառնական կարողության զորացումը:

ՍԿՏՀ-ը գործառնական լուծումների ամբողջական ծրագրային համակարգ է, որը միավորում է միգրացիայի դյուրինացման և կառավարման բոլոր ասպեկտները՝ ապահովելով սահմանների անվտանգությունն ու հսկողությունը: Այն համապատասխանում է ցանկացած տիպի սահմանի (օդային, ծովային, ավտոճանապարհային կամ երկաթուղային) տեխնոլոգիական պահանջներին: ՍԿՏՀ-ը մշակվել է *«Ավիահիֆուրել ՓԲԸ-ի* կողմից, որը հայտնի է միջազգային օդանավակայանների կառավարման, գույքի և ռեսուրսների տարածքային կառավարման, գլոբալ տեղեկատվական համակարգերի կառավարման ոլորտներում իր տեխնոլոգիական լուծումներով:

ՍԿՏՀ-ը առաջին անգամ ներդրվել է Երևանի «Զվարթնոց միջազգային օդանավակայանում 1999 թվականին: *«Միգրացիայի կառավարման կարողությունների զորացում* ծրագրի շրջանակում 2000 թ.-ին ՄՄԿ-ը կատարեց Հայաստանում սահմանների կառավարման գնահատում: ՀՀ Կառավարությանը ներկայացված գնահատման հաշվետվության հիման վրա ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) նախաձեռնեց սահմանային բոլոր հսկիչ կետերը ՍԿՏՀ-ում ընդգրկելու, սահմանների տվյալների սինխրոնացման և սահմանահատման գործընթացի ղեկավարման ամբողջական ցիկլի հաստատման աշխատանքները:

ՀՀ Կառավարությունը հրավիրեց ՄՄԿ-ին մասնակցելու ՍԿՏՀ-ի ընդլայնման ջանքերին: Այդ նպատակով ՄՄԿ-ը նախաձեռնեց համակարգի անկախ տեխնիկական գնահատում: 2004-2005 թթ. ԱՄՆ Պետական դեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից ֆինանսավորվող *«Սահմանային կառավարման տեղեկատվական համակարգի ընդլայնում* ծրագրի շրջանակում ՍԿՏՀ-ը ընդլայնվեց՝ իր ցանցում ներառելով Վրաստանի Հանրապետության հետ ցամաքային սահմանի Բագրատաշենի հսկիչ անցագրային

կետը: 2007 2008թթ. ԱՄՆ Կառավարության, ՀՀ Կառավարության և *«Ավիահիֆուրել ՓԲԸ-ի* ֆինանսավորմամբ իրականացվող *«Սահմանների կառավարման համակարգի ցանցի ստեղծում և հետագա ընդլայնում. Հայաստանի Հանրապետություն* ծրագրի շրջանակում ՍԿՏՀ-ում ընդգրկվեցին Իրանի հետ ցամաքային սահմանի Մեղրիի հսկիչ կետը, Գյումրի օդանավակայանը և Վրաստանի հետ սահմանի վրա գործող ևս երեք հսկիչ անցագրային կետեր (Բավրայի և Գոգավանի ցամաքային հսկիչ կետերը և Այրումի երկաթուղային կայարանը): Ներկայումս սահմանային երկու այլ կետերում (Վրաստանի հետ սահմանի վրա գործող Պրիվոլնոյե և Ջիլիզա հսկիչ կետերում) ընթանում են ՍԿՏՀ-ի ներդրման աշխատանքները, որոնք ֆինանսավորվում են ՀՀ Կառավարության կողմից:

ՍԿՏՀ-ի ընդլայնումը համահունչ է ՀՀ Կառավարության սահմանների կառավարման բարեփոխումներին: 2006թ. հունիսի 22-ի ՀՀ Կառավարության «ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման մասին թիվ 884-Ն որոշման և նրա «Իրականացման ժամանակացույց -ի համաձայն, ՍԿՏՀ-ին պետք է միանան հետևյալ մարմինները. (ա) ՀՀ Գլխավոր դատախազությունը, (բ) ՀՀ Արդարադատության նախարարությունը, (գ) ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը, (դ) ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը, (ե) ՀՀ Պաշտպանության նախարարությունը, (զ) ՀՀ ԱԱԾ-ը, (է) ՀՀ Ոստիկանությունը, (ը) ՀՀ Քաղաքացիական ավիացիայի վարչությունը, (թ) ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, (ժ) Միգրացիոն գործակալությունը, (ի) Հարկային ծառայությունը և (լ) դատարանները: Անվտանգության և ազգային պաշտպանության խնդիրների համար տրվում է տեղեկատվական ողջ բազայի ծավալից օգտվելու իրավունք: Տվյալները պահվում են յոթ տարի ժամկետով: Այլ նպատակներով ՍԿՏՀ-ի տեղեկատվական բազայից տվյալները կարող են տրամադրվել միայն սահմանափակ ժամանակաշրջանների համար: Նման տեղեկատվության ստացման և օգտագործման իրավունքը տրվում է միայն դատական որոշման հիման վրա: Կոնկրետ հարցերի վերաբերյալ տվյալների փոխանակում ապահովելու նպատակով ՍԿՏՀ-ը կարող է ցանցային կապ հաստատել արտաքին գործակալությունների հետ, ներառյալ. (ա) օտարերկրյա պետությունների հյուպատոսությունները և առաքելությունները, (բ) Ինտերպոլի տեղեկատվական բազաները, (գ) ճանապարհորդային / փոխադրող ընկերությունները (օրինակ՝ ավիաուղիները, երկաթուղային, մայրուղային փոխադրումներ իրականացնող ընկերությունները), և (դ) լիազորված գործակալությունները (օրինակ՝ ճանապարհորդային/ տոմսերի ամրագրման ու վաճառքի/զբոսաշրջային ընկերությունները):

Շարունակվում են Հայաստանի սահմանային բոլոր հսկիչ կետերը ՍԿՏՀ-ում ընդգրկելու աշխատանքները, որովհետև Կառավարությունը կարևորում է սահմանների հսկողության բարձր արդյունավետ տեխնոլոգիաների նշանակությունն այսօրվա գլոբալացված աշխարհում: Գլոբա-

լացման հետևանքով աճել է ուղևորությունների թիվը, որը տվել է բազմաթիվ դրական արդյունքներ: Ինչևէ, այն ուղեկցվում է նաև բացասական և անցանկանալի երևույթներով, ինչպիսիք են թրաֆիքինգն ու մաքսանենգությունը, ապրանքների ապօրինի փոխադրումներն ու միջազգային ահաբեկչությունը, որոնք հնարավոր է կանխարգելել՝ ելքի, տարանցիկ և ընդունող երկրներում միգրացիայի կառավարման կարողությունների հզորացման միջոցով: ՄՄԿ-ը համոզված է, որ լավ կառավարվող միգրացիան շահեկան է և՛ միգրանտների, և՛ հասարակությունների համար:

Սահմանապահը ստուգում է ուղևորի անձնագիրը

Այսօր ՍԿՏՀ-ի շնորհիվ Հայաստանի սահմանների հատման հսկիչ կետերն ապահովված են սահմանների արդյունավետ հսկողության և կառավարման ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով:

Հսկիչ կետերում տեղադրված լոկալ սահմանների հսկողության համակարգերի սինխրոնացման նպատակով ներդրվել և գործարկվել է ՍԿՏՀ-ի կենտրոնական հանգույցը:

Սինխրոնացված համակարգի շնորհիվ առավել արդյունավետ և ամբողջական է դառնում տարանցիկ տեղաշարժերի հսկողությունը, ներառյալ.

- ⇨ տարանցիկ փոխադրամիջոցների նույնականացումը,
- ⇨ վիզայի ժամկետների խախտման դեպքերի նույնականացումը,
- ⇨ սահմանի վրա որպես «տրանսպորտային միջոց կամ «տարանցիկ փոխադրման մեջ գտնվող գրանցված, սակայն հետագայում երկրի տարածքում ապամոնտաժված և մասերով վաճառված ավտոմեքենաների դեպքերի վերհանումը:

Սինխրոնացված համակարգի միջոցով ցանկացած հսկիչ կետում սահմանապահը կարող է հարցում կատարել և ստանալ ուղևորների ու ավտոմեքենաների կողմից նախկինում սահմանի հատման և վիզաների ստացման բոլոր տվյալները, անկախ նրանից, թե նրանք մուտքի/ելքի որ կետով են հատել սահմանը:

ՍԿՏՀ-ի շնորհիվ սահմանների կառավարման կենտրոնական մարմինը կարող է.

- ⇨ կատարել ուղևորների/փոխադրամիջոցների հոսքերին վերաբերող բարդ վերլուծական հարցումներ,
- ⇨ կատարել մոտավոր հարցումներ և ստանալ բավարար պատասխաններ, նույնիսկ եթե հարցումը և/կամ տվյալների բազայի տեղեկատվությունը ճշգրիտ չէ,
- ⇨ ստանալ բավարար տեղեկատվություն անգամ եթե հարցում կատարողն ունի հարցման առարկայի միայն վիճակագրական նկարագրություն,
- ⇨ ստանալ միգրացիայի վերաբերյալ ինտեգրալ հաշվետվություններ:

ՍԿՏՀ-ի **սահմանների կառավարման հիմնական գործառույթները** ներառում են հետևյալը.

- ⇨ օրինական միգրացիայի դյուրինացում, սահմանների անվտանգություն և հսկողություն,
- ⇨ անօրինական միգրացիայի, մարդկանց թրաֆիքինգի, թմրանյութերի և զենքի անօրինական առևտրի կանխարգելում,
- ⇨ վիզայի համար դիմորդի տվյալների անալիտիկ համեմատում մերժված վիզաների տվյալների բազայի հետ,
- ⇨ վկայի կողմից իրական պատկերի վրա փնտրվող անձին հեռակա մատնանշումը,
- ⇨ վիզաների ձևակերպում և տրամադրում /էլեկտրոնային վիզա,
- ⇨ փոխադրամիջոցների և բեռների սահմանահատման կառավարում, տարանցիկ շարժերի նկատմամբ հսկողություն,
- ⇨ միգրացիայի (արտագաղթի, ներգաղթի) միտումների, փախստականների և ապաստան հայցողների, գործնական, ուսման և զբոսաշրջության նպատակներով ճանապարհորդող անձանց, անօրինական միգրացիայի, մարդկանց մաքսանենգության, թրաֆիքինգի և այլ տվյալների վերլուծություն,
- ⇨ սահմանային հսկողության և կառավարման վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերի իրականացում,
- ⇨ սահմանային կետերի ենթակառուցվածքի և ռեսուրսների կառավարում,
- ⇨ իրավապահ մարմինների միջև սահմանահատումների մասին տվյալների փոխանակման դյուրինացում:



ՍԿՏՀ ցանցը

ՍԿՏՀ-ը ունի հետևյալ **հնարավորությունները.**

- մուտքի և ելքի հոսքերի մշտական վերահսկում, ժամանումների և մեկնումների համապատասխանության ստուգում՝ վիզայի ժամկետների խախտումների կամ կորած մարդկանց բացահայտելու համար:
- հետախուզման մեջ գտնվող անձանց մասին ահազանգում՝ վիզաների ձևակերպման, սահմանի վրա մուտքի ու ելքի ժամանակ անձի, փաստաթղթի, բեռների կամ փոխադրամիջոցի բազմակողմ ստուգումներ ԱԱԾ-ի, ոստիկանության, ինտերպոլի և այլ տեղեկատվական բազաների հետ: Հետախուզման մեջ գտնվող անձանց մասին հաստատագրված հաղորդագրություն ուժային կառույցների համապատասխան աշխատակիցներին:
- հարցումների և հաշվետվությունների լայնածավալ հնարավորություն ոչ հզոր կապուղիների պարագայում:
- հարմար է օգտագործման համար: Տվյալների կրկնակի մուտքագրման բացակայություն, քանի որ առկա տվյալները հասանելի են համակարգի ցանկացած հատվածում: Բացի այդ համակարգը հասանելի է IP կապով ապահովված օգտվողին՝ անվտանգության բարձր մակարդակի ապահովմամբ:

Համակարգում կիրառված են ժամանակակից տեխնոլոգիաներ: Համակարգն աշխատում է փաստաթղթեր կարդացող/լուսանկարող սարքերի, տվյալները հեռահար կարդացող, կենսաչափական տվյալներ գրանցող և կարդացող սարքերի հետ: Համակարգն ինտեգրում է երկրատեղեկատվական տեխնոլոգիա, աշխատում է SMS, GPRS պրոտոկոլներով, համապատասխանում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության հանձնարարականներին և այլ ստանդարտներին:

Իրական ժամանակում իրականացվող վարույթը սահմանի հսկիչ անցագրային կետում: Հեռակա դիտորդը կարող է հետևել սահմանի հատման հսկիչ կետում տեղադրված տեսախցիկի նկարահանմանը և անհրաժեշտության դեպքում պատկերի վրա մատնանշել հետաքրքրության առարկան:



Անձը հաստատող փաստաթղթերի տեղեկատվական համակարգը

ՍԿՏՀ-ի որոշ կարևոր առանձնահատկությունները.

- Տարբեր երկրների կողմից թողարկված անձը հաստատող/ճամփորդական/ անվտանգության փաստաթղթերի (օրինակ՝ անձնագրերի) բոլոր հատկանիշները պարունակող տեղեկատվական բազա՝ փաստաթղթերի տեսակները, սերիական համարների ձևաչափերը, էջերի քանակը, անվտանգության նշանները, կազմի արտաքին տեսքը, կազմման տեսակը, էջերի չափերը, անվտանգության պիտակների ձևը և այլն:
- Տարբեր երկրների կողմից թողարկված փաստաթղթերի կարևոր էջերի շատ բարձր որակի (15 մեգապիքսել) պատկերների ցուցադրում, լուսավորման տարբեր պայմանների (սպիտակ լույս, ուլտրամանուշակագույն, ինֆրա-կարմիր) և լույսի տարբեր անկյան տակ երևացող անվտանգության նշանների, ինչպես նաև միկրոպրինտների, հոլոգրամների և այլ նշանների բարձրորակ ցուցադրում:
- Պարունակում է տեղեկատվություն ինչպես իսկական, այնպես էլ կեղծված փաստաթղթերի վերաբերյալ: Տեղեկատվական բազան ներառում է մեծ թվով տարբեր երկրների անձնագրերի նմուշները, և այն շարունակաբար համալրվում է նոր տվյալներով:
- Տարբեր երկրների հյուպատոսական ծառայությունները կարող են կորած կամ անվավեր հայտարարված փաստաթղթերի տվյալները փոխանակել համակարգի միջոցով:
- Տարբեր երկրների հատուկ գործակալությունները կարող են համակարգում տեղադրել իրենց կողմից հայտնաբերված կեղծ փաստաթղթերի նկարները, որից հետո բացահայտված կեղծումների մասին տեղեկատվությունը առցանց հասանելի կլինի համակարգն օգտագործող բոլոր պետությունների սահմանապահներին:

Անձը հաստատող փաստաթղթերի տեղեկատվական համակարգից (ՓՏՀ) հնարավոր է օգտվել շուրջօրյա: Օգտվողներից պահանջվում է միան համակարգիչ՝ առանց հատուկ ծրագրային միջոցների տեղադրման, սովորական ինտերնետային կապ և ինտերնետ բրաուզեր:

Սահմանային կառավարման բարեփոխումները կշարունակվեն Հայաստանում, և հանրապետությունում առկա է հետագա աշխատանքների իրականացման ներուժը: Վերջիններս կներառեն հետևյալ ուղղությունները.

(i) Ինտեգրված ՍԿՏՀ-ի իրականացումը:

Միգրանտների մասին տեղեկատվության փոխանակման միջավայրի ստեղծում՝ մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգության կանխման նպատակով, ինչպես նաև ռեադմիսիայի ենթակա անօրինական միգրանտների նույնականացմանն օժանդակելու նպատակով:

Այս ծրագրի նպատակն է թրաֆիքինգի փաստացի կամ հավանական զոհերին հնարավորություն տալ առցանց կապի միջոցով իրավապահ մարմիններին տեղեկացնել իրենց միգրացիոն պրոբլեմների մասին: Հասանելիության և օգտագործման տեսանկյունից ծառայությունը պետք է լինի դյուրին: Հասանելիություն.

Ամենուր՝

- Ինտերնետի միջոցով
- Ինտերնետային դանդաղ (հեռախոսային) կապի օգտագործելիություն
- Օգտվողի աշխատատեղի նկատմամբ հատուկ պահանջների բացակայություն
- Հատուկ ծրագրային փաթեթի տեղադրման անհրաժեշտության բացակայություն (ստանդարտ web բրաուզերը բավարար է),
- Հասանելիություն՝ նաև ընդհանուր օգտագործման ռադիոկապի փաթեթի (GPRS), կարճ հաղորդագրությունների ծառայության (SMS) պրոտոկոլների միջոցով աշխատող ձեռքի շարժական սարքերի միջոցով:

Յուրաքանչյուրի համար՝

- Տվյալների բազմալեզու մուտքագրում և դիտում
- Օգտագործողի համար հարմար ինտերֆեյս
- Ծրագրային փաթեթների տեղադրման բացակայություն՝ օգտվողից չի պահանջում տեխնիկական հմտություններ:

Ցանկացած պահին՝

- Լավ կազմակերպված տվյալների կենտրոնները ծառայությունը կդարձնեն շուրջօրյա և առանց խափանումների:

(ii) Ինքնությունը հաստատող փաստաթղթերի տեղեկատվական համակարգի (ՓՏՀ) ներդրում՝ ուղղված ազգային, տարածաշրջանային և միջ-տարածաշրջանային խնդիրների իրագործմանը:

ՄՄԿ-ը կշարունակի աջակցել ՀՀ Կառավարությանը սահմանների կառավարման և միգրացիայի կառավարման բարեփոխումների իրականացման գործում:

IOM International Organization for Migration
OIM Organisation Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones

Միգրացիայի միջազգային կազմակերպություն
Հայաստանյան առաքելություն.
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ • Պետրոս Ադամյանի
փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• **Էլ.փոստ՝** iom@iom.am • http://www.iom.int/armenia

«Գևորգ-Հրայր ՍՊԸ
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6
Հեռ.՝ 527974, 527947
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru